

Հեռագրաւ երգ երգել .

Անդդիոյ մէջ տեսակ մը ելեքտրա-
կան հեռագրութիւն հնարուեցաւ, ու
րով կրնան մարդիկ մէկ աշխարհէ ու-
րիշ աշխարհ, որչափ այլ հեռաւոր ըլ-
լայ՝ եղանակներ երգել :

Արուեստաւորը նուագարանին առ-
ջիկէն ալով կ'երգէ խողովակի մը մէջ
ուզած եղանակը . խողովակին բերնին
մօտ ձգտեալ մաշկ մը կայ որ երգուած
եղանակին համեմատ թրթռալով՝ հա-

ղորդիչ թելով մը կ'ազդէ նոյնպիսի
մաշկի մը իր ուզած հեռաւոր երկիրը :

Առջի մաշկին թրթռմանց թիւը ճիշդ
կը համեմատի թելով խրկուած ընթա-
ցող ելեքտրականին շարժմանցը զոր
կը հաղորդէ հակադիր մաշկին, որ ըն-
թացող զօրութեան ազդման տակ կ'ար-
ձըկէ այնպիսի ձայն մը, որ նման է եր-
գուած ձայնին : Անշուշտ քիչ ատենէն
պիտի կարենան մարդիկ հասարակ խօ-
սակցութեան կերպով իրարու հետ խօ-
սիլ աշխարհքիս մէկ ծայրէն մէկալ
ծայրը :

Խ Ա Ն Դ

Քընար ի գիրկ վերամբարձ, մատունք ի լար յարդարուն
Ես ձայն առ քեզ արկանեմ աստուածեղէն շունչ խօսուն .

Ո՛վ ազդումն անճառ ,

Ծընունդ արփեաց վառ :

Զոսկեճաճանչ լոյծ ըզթեւս՝ ճախր ի թրուիչ հար աղէ ,
Մատիւր ի լուռ յայս քընար . յեռանդ ջերոտ զարթիցէ .

Եւ լարք բախեսցին

Ի նուագ սիրային :

Պուրակազեղ լուռ անտառ սաղարթազուարճ ի ստեղունս ,
Դաշնակաւոր հարկանէ սարսափաձայն քաղցր հընչմունս .

Զի շընչեաց հեղիկ

Զեփիւռ քաղցրասիւք .

Որ ի զըւարթ քըրքմացան , յարևածայր ծիրանի ,
Սաւառնաթեւ էջ ի նա , փարեալ զոստովք դալարի ,

Եւ մեղմիկ ի կոծ

Սարսեն սաղարթք հոծ :

Թըռչուն ընդ օդ թեւահերձ անդ ի ճախրանս բազմախաղ .
Նըւագ ի նուագս յեղյեղեալ եղանակէ գեղգեղ տաղ .

Մերթ յոստին թառել ,

Մերթ բարձր ի վերել :

Ո՛ր սըրտեռանդ շունչ յորդոր եւ զինչ ոգի երգահան ,
Ի գիրդ լանջին փափկասուն եւ փոքրատար դոյզն յաման ,

Դիւրագգած սըրտին ,

Կակուղ սոսորդին :